

լորովին մտացածին էր, եւ պատճառ եղաւ բաւական վէճի: Իրմէ կան շահեկան թղթակցութիւններ վատիկանի դիւաններուն մէջ:

Ֆրանսական ղեսպան Տը Ֆէրիօլ խնթեցաւ: Այս մասին Մօթլըէյ կը վըկայէ. «Իրմէ առին գեղեցիկ երիտասարդ հայուհի մը, զոր հոգեւոր գուտար կը կոչէր եւ որ իրեն (Ֆէրիօլի) կը հետեւէր ամէն տեղ, իրեն մօտ կը նստէր սեղանին վրայ եւ եկեղեցիք»<sup>34</sup>):

Օրմանեանին իբր եգերացի Այչէ անուամբ աղջիկ ծանօթ է այս «հոգեւոր գուտարը» Ֆէրիօլի:

1710-ին ուղեգիրը վերստին Հոռոմ է: «Մինչ Խոն կը գտնուէի, հետաքրքրութիւնը ունեցայ մասնակցելու յունաց եւ հայոց փորձավէճերուն՝ տեսնելու համար թէ անոնք ինչո՞վ կը տարբերին Արեւելք գտնուողներէն: Եւ գտայ, որ բաւական հաւատարիմ են իրենց կրօնքին արտաքին ձեւին մէջ, բացի անկէ, որ Հոռոմիները աւելի յարգանք եւ պատիւ ցոյց կուտան հացին եւ գինուոյն հանդէպ, անոնց նուիրականացումէն վերջ, քան թէ միւսները: Անոնք կը պահեն ռամիկ (ազգային իմաստով) լեզուն պաշտօնակատարութեան ամէն մասերուն մէջ: Լատինացած հայերը Հոռոմի մէջ յոյներէն աւելի ընտիր կաթոլիկներ կը նկատուին եւ անհամեմատ աւելի բազմաթիւ են հոն, նոյնպէս արեւելեան երկիրներուն մէջ, ուր ամէն հաւատադարձ յոյն հարիւրեակի դէմ հազար հայեր կան: Քարոզիչները յաճախ կը դանդատին յոյներու հաւատքի մասին: Անոնք ըսին ինծի թէ յոյներէն քանի մը հատ Հոռոմ կուգան, կաթոլիկ հաւատքը կ'ընդունին եւ, նորազարձներու տրուած նուէրները ընդունելէ ու բոլոր կարելի առաւելութիւնները ստանալէ վերջ, գաղտնի տուն կը գառնան՝ վերստին իրենց եկեղեցւոյն միանալու համար: Ես Լոնտոնի մէջ տեսայ այս յետա-

դարձներէն երկուքը, որոնք իբր այդ ինծի ցոյց տրուեցան»:

«Լատինացած հայերը կը պահեն Սուրբ Դոմինիկեանց կարգը, փոխան Սուրբ Բարսեղի, եւ իբր սուրբ կը նկատեն անոնց մեծ մասը, որ հոռոմայեցիներէն ընդունուած է: Պապը, ինչպէս որ արդէն ըսած եմ, անոնցմէ ոմանք պատրիարք եւ եպիսկոպոս կ'ընէ in Partibus infidelium, որոնք ընդհանրապէս Հոռոմ կը ընակին, երբ իրենց դաւանող հայոց թիւը մեծամասնութիւն չէ Մահմետական իշխանութեանց տակ գտնուող վայրերուն մէջ, թէեւ բազմաթիւ են: Լատինացած պատրիարքը անոնց հետ կը ընակի եւ իր աստիճանին պատկանող արարողութիւնները կը կատարէ: Նախ՝ կ'ընտրուի իշխանէն, որուն իշխանութեան մէջ է, եւ յետոյ կը հաստատուի Պապէն, ինչպէս որ, օրինակի համար, Պարսկական Նախիջեւանի պատրիարքը»:

«Սուրբ Մարիամ Եգիպտացիի եկեղեցին, ուր Հոռոմի հայերը իրենց սրբազան ծիսակատարութիւնները կ'ընեն, գեղեցիկ շէնք մըն է, ու նախապէս Fortuna Virilis-ի համար նուիրագործեալ տաճար մը: Իր նախկին ճարտարապետութեան շատ մը մասերը պահած է, ինչպէս նաեւ իր զարդերն ու նիւթերը, օրինակի համար՝ արեւելեան մարմարէ իր սիւները եւ ուրիշ մնացորդները իր նախորդ շքեղութեան, անոր տրուած Պապ Pius IV (1559-1565)էն: Անկէ ի վեր հայերը պահած են»<sup>35</sup>):

1711-ին Նիկիա հանդիպելուն առթիւ ուղեգիրը կը վկայէ, որ քաղաքը բնակուած է թուրքերէ, յոյներէ, հայերէ եւ հրեաներէ<sup>36</sup>):

Այսքանով ալ կ'աւարտի ուղեգրութեան Ա.ին հատորին հայոց նուիրեալ մասը:

35) Անդ՝ էջ 321-322:

36) Անդ՝ էջ 345:

34) Անդ՝ էջ 289: